# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N338-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N338-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 17-րդ, «Իրավական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածները և 2015 թվականի դեկտեմբերի 21-ին «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետը` Հա-յաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մարտի 31-ի «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներըհաստատելու մասին» N338-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները`

- որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ` «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների և Արարատյան դաշտի ստորերկրյաջրային ռեսուրսների 2017-2021 թվականներիկառավարմանպլանները, ինչպես նաև արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին»,
- որոշման 1-ին կետը լրացնել նոր 3-րդ, 4-րդ և 9.1 ենթակետերով`համապատասխանաբար հետևյալ բովանդակություններով.

ա) «Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների 2017-2021 թվականների կառավարման պլանը` համաձայն N1 հավելվածի»,

բ)«Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանն ուղղվածառաջնահերթ միջոցառումները` համաձայն N2 հավելվածի»,

գ) «Արփայի գետավազանում արգելել փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հավելված N1

ՀՀ կառավարության 2017 թվականի

«» «»-ի N որոշման

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ**

**ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ**

1. **Արարատյան դաշտի նկարագիրը ԵՎկառավարմանպլանինպատակը**

1. Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների կառավարման պլանի նպատակն է հավասարակշռել ջրօգտագործողների՝ ներառյալ համայնքների, արդյունաբերության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերությունները:
2. Արարատյան դաշտը միջլեռնային գոգավորություն է, եզրավորված հարավից՝ Փոքր ու Մեծ Արարատ լեռնազագաթներով և դեպի արևմուտք ձգվող Հայկական պար լեռնաշղթայով, հյուսիսից՝ Արագածի, Արա լեռան զանգվածներով և Ծաղկունյաց լեռնաշղթայով, արևելքից՝ Գեղամա, Երանոսի, Շեկասարի և Ուրցի լեռնաշղթաներով, արևմուտքում գոգավորությունը հարում է Կարսի սարահարթին: Արարատյան դաշտը ընդգրկում Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Արարատի և Արմավիրի մարզերը: Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի N1749-Ն որոշման ՀՀԱրարատի և Արմավիրի մարզերը բաշխված են Արարատյան, Հրազդանի և Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքների միջև՝ ներառելով Ազատի,Վեդու գետավազանները՝ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքից, Քասախ, Հրազդան գետավազանները՝ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքից, Մեծամորի գետավազանը՝ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքից:
3. Արարատյան դաշտը հանդիսանում է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի կուտակման և բեռնաթափման վայրը:

Այն տեղակայված է Արաքս գետի ավազանի միջին հոսանքում և ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք՝ գրավելով շուրջ 1300կմ$^2$ մակերես: Արարատի և Արագածի, Գեղամա, Ուրցի ու Հայկական պար լեռնաշղթաները իրենց նախալեռնային մասերով հանդերձ հանդիսանում են Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրերի սնման կամ ձևավորման և տարանցման վայրերը:

1. **Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսները, օգտագործելի, ռազմավարական եվ ազգային ջրային պաշարները**

4. Ըստ տարբեր տարիների գնահատականների, Արարատյան դաշտի ստորերկրյա ջրերի բնական վերականգնվող ռեսուրսների միջին թվաբանականը կազմում են 1822,3 մլն մ$^3$/տարի:
5. Արարատյան դաշտի շահագործական պաշարները վերջին անգամ հաստատվել են 1984թվականին,Պաշարների Պետական Հանձնաժողովի կողմից: Հորատանցքերի ծախսերով վերականգնվող (օգտագործելի՝ A+B կարգեր) ստորերկրյա ջրային ռեսուրսներըհաստատվել է1630,4մլն մ$^3$/տարի:
6. 2016թ. դրությամբ վերականգնվող (օգտագործելի՝ A+B կարգեր) ստորերկրյա ջրային ռեսուրսները՝ համաձայն «Ջրիազգայինծրագրիմասին» ՀՀօրենքիկազմում են 1100,0մլնմ$^3$/տարի: Ռազմավարական և ազգային ստորերկրյա ջրային պաշարները հաշվարկվել են $C_2$ կարգով հաստատված պաշարների կամ ստորերկրյա ջրերի խորքային հոսքի՝ 683,5 մլնմ$^3$/տարի ջրաքանակի 50%-ի չափով, յուրաքանչյուրը կազմելով 341,7 մլնմ$^3$/տարի:
7. Արարատյանդաշտում 2016թ. դրությամբստորերկրյաջրերիփաստացիօգտագործումը, ըստգույքագրմանևհաշվառմանտվյալների,գնահատվելէշուրջ1670,0մլն մ$^3$/տարի:
8. Արարատյան դաշտի ստորերկրյա վերականգնվողջրային ռեսուրսների՝1100,0մլն մ$^3$/տարիև օգտագործվող՝ 1670,0մլն մ$^3$/տարի ստորերկրյա ջրային ռեսուրսների հավասարակշռությունը խախտված է, ինչը հանգեցրել է հորատանցքերի ջրատվությունների զգալիորեն նվազեցման: Ստորերկրյա ջրային ռեսուրսների գերշահագործումը հանգեցրել է շուրջ 22 հազար հեկտար Արարատյան դաշտի դրական ճնշումով ստորերկրյա ջրերի տարածման սահմանի նվազմանը, հողի աղակալման երևույթների արագացմանը, ինչպես նաև Մասիսի տարածաշրջանում հողային ծածկույթի և շինությունների փլուզման վտանգի երևույթների առաջացմանը:
9. Արարատյան դաշտի ստորերկրյաօգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները՝ համաձայն Պաշարների Պետական Հանձնաժողովի հաստատած պաշարների, «Ջրիազգայինծրագրիմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 31-ի «Արարատյան ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ

միջոցառումները հաստատելու մասին»N338-Ն և ՀՀ կառավարության 2017 թվականի մարտի 9-ի «Ախուրյանի ջրավազանային տարածքի 2017-2022 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N240-Ն որոշումների սահմանված են սույն հավելվածի N 1 աղյուսակում:

ԱղյուսակN 1

| Հ/Հ | Ջրավազանային կառավարման տարածքների ջրային ռեսուրսները մլն.մ$^3$/տարի | **Ընդա** **մլն.մ$^3$** |
|---|---|---|
| | **Օգտագործելի ստորերկրյա ջրային ռեսուրսները՝** | **1100.** |
| **Արարատյան դաշտ** | A+B կարգերով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները | |
| | **Ռազմավարական ստորերկրյա ջրային պաշարը՝** | **341.7** |
| | $C_2$ կարգով հաստատված պաշարների կամստորերկրյա ջրերի խորքային հոսքի 50% | |
| | **Ազգային ջրային պաշարը՝** | **341.7** |
| | $C_2$ կարգով հաստատված պաշարների կամստորերկրյա ջրերի խորքային հոսքի 50% | |

- **Արարատյանդաշտի ստորերկրյա ջրայինռեսուրսներիՑ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՒՄը, բարելավման սցենարը եվ ըստ ոլորտների ջրառաջարկի եվ ջրապահանջի գնահատում**

10. Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսների բարելավումն ըստ ոլորտների տալու նպատակով կանխատեսվել է դաշտում ջրառաջարկն ու տնտեսական զարգացմամբ պայմանավորված ջրապահանջարկը՝ կառավարման պլանավորման հնգամյա ժամանակահատվածի համար:
11. Ջրառաջարկի առկա իրավիճակի վերլուծություն՝

- Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրառաջարկը գնահատվում է` հաշվի առնելով Արարատյան դաշտի ազգային, ռազմավարական  ջրային պաշարները և օգտագործելի ջրային ռեսուրսների մեծությունները,
- Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրառաջարկի գնահատումը 2016-2021 թվականների համար ներկայացված է համաձայն սույն հավելվածի  N 2 աղյուսակի.

Աղյուսակ N 2

**Ստորերկրյաջրայինռեսուրսներիջրառաջարկը**

| **Արարատյան** | **մլնմ$^3$/տարի** | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | **2016** | **2017** | **2018** | **2019** | **2020** | **2** |
| **դաշտ** | 1100.0 | 850.0 | 800.0 | 800.0 | 800.0 | 8 |

12. Սույն հավելվածի N 2 աղյուսակում, Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների 1100,0 մլնմ$^3$/տարի` 2016 թվականի ջրառաջարկը, 2017 թվականի համար սահմանվում է 850.0 մլն մ$^3$/տարի և մինչև 2021 թվականը նվազում է , քանի որ «Ջրիազգայինծրագրիմասին» ՀՀօրենքում սահմանված չափաքանակից փաստացի օգտագործվում են ավելի ստորերկրյա ջրային ռեսուրսներ, իսկ նշված չափաքանակների հաստատումը թույլ կտա վերականգնելստորերկրյա ջրային ռեսուրսները:
13. Արարատյան դաշտում փաստացի ջրօգտագործման, ջրառաջարկի և Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսների դեֆիցիտը և պրոֆիցիտը գնահատելու համար օգտագործվել են 2016 թվականի գույքագրմանևհաշվառմանտվյալները,

- Արարատյան դաշտում 2016 թվականի փաստացի ջրօգտագործումը, «Ջրիազգայինծրագրիմասին» ՀՀօրենքով սահմանված ջրառաջարկը (վերականգնող ստորերկրյա ջրային ռեսուրսներ) և ստորերկրյա ջրային ռեսուրսների դեֆիցիտը/ պրոֆիցիտը ներկայացված է համաձայն սույն հավելվածի N 3  աղյուսակի.

Աղյուսակ N3

| **Հ/Հ** | **Ջրօգտագործմաննպատակը** | **2016 թվականին Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսներից փաստացի ջրօգտագործումըըստոլորտների մլնմ$^3$/տարի** |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1. | Խմելու-կենցաղային | 193.0 |
| 2. | Ոռոգում | 581.0 |
| 3. | Ձկնաբուծություն | 809.0 |
| 4. | Արդյունաբերություն | 25.0 |
| **5.** | **Ընդամենըջրապահանջարկը** | 1608.0 |
| **6.** | **Ջրառաջարկը** | 1100.0 |
| **7.** | **Դեֆիցիտը/պրոֆիցիտը** | **-508.0** |

14. Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսները հիմնականում օգտագործվում են ձկնաբուծության, ոռոգման, խմելու-կենցաղային և արդյունաբերական նպատակներով: Ստորև բերվում են 2017 թվականի դրությամբ ջրառի չափաքանակները՝ ըստՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվությունների և տրված է վերլուծությունսույն հավելվածի N 2 աղյուսակում նշված 2017 թվականի ջրառաջարկի համեմատությամբ.

- ձկնաբուծական նպատակով ջրառը կազմում է 2017 թվականի ջրառաջարկի շուրջ 78%-ը, 2017 թվականի դրութամբ կազմելով 662.0 մլնմ$^3$/տարի,
- ոռոգման համար պահանջվող ընդհանուր ջրաքանակի հաշվեկշռում ստորերկրյա ջրերի մասնաբաժինը կազմում է շուրջ 1/4-ը, որի գերակշիռ մասը բաժին է ընկնում խորքային պոմպերով թույլ ճնշումային ջրատար հորիզոնից արտահանված ջրերից և կազմում է 2017 թվականի ջրառաջարկի շուրջ 26%-ը, 2017 թվականի դրութամբ կազմելով221.3 մլնմ$^3$/տարի,
- խմելու-կենցաղային նպատակով ջրառը կազմում է 2017 թվականի ջրառաջարկի10 %-ը, 2017 թվականի դրութամբ կազմելով78,4 մլնմ$^3$/տարի,
- արդյունաբերական նպատակով ջրառը կազմում է 2017 թվականի ջրառաջարկի 2,8 %-ը, 2017 թվականի դրութամբ կազմելով 23.4 մլնմ$^3$/տարի,
- Վերը նշված վերլուծությունը ցույց է տալիս, որ 2017 թվականի դրությամբ, ըստ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվությունների ջրապահանջարկը կազմում է 985,1 մլնմ$^3$/տարի, սակայն սույն հավելվածի N 2 աղյուսակում 2017 թվականի ջրառաջարկը կազմում է 850,0 մլնմ$^3$/տարի, ուստի առկա է -135,1 մլնմ$^3$/տարի ջրաքանակի դեֆիցիտ, ինչը փաստում է, որ ջրառաջարկի համեմատ օգտագործվում է 16,8 %-ով ավելի ստորերկրյա ջրային ռեսուրս:

15. Ըստ ոլորտների ջրապահանջարկի և ջրառաջարկի բարելավման սցենարը՝

- Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրառաջարկիևջրապահանջարկիվերլուծությունըտրվումէելակետային (բազիսային)սցենարով՝ըստջրօգտագործմանոլորտների: Սցենարըորոշվելէ 2017թվականների դրությամբջրօգտագործման թույլտվություններով ջրօգտագործման և սույն հավելվածի N2

աղյուսակումներկայացված ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրառաջարկի կանխատեսումների համադրմամբ,

- Ըստ ոլորտների ստորերկրյա ջրային ռեսուրսների ջրապահանջարկի և ջրառաջարկի բարելավման սցենարը բերված է համաձայն սույն հավելվածի N4 աղյուսակի.

Աղյուսակ N 4

| **Արարատյան դաշտ** | **Ջրօգտագործմաննպատակը** | **Ջրօգտագործումըստոլորտների մլնմ³/տարի** | | | |
|---|---|---|---|---|---|
| | | **2017** | **2018** | **2019** | **2020** |
| | Խմելու-կենցաղային | 78.4 | 150.1 | 150.1 | 170.1 |
| | Ոռոգում | 221.3 | 230.3 | 230.3 | 234.4 |
| | Ձկնաբուծություն | 662.0 | 400.0 | 400.0 | 368.0 |
| | Արդյունաբերություն | 23.4 | 30.0 | 30.0 | 36.1 |
| | **Ընդամենըջրապահանջարկը** | **985.1** | **810.4** | **810.4** | **808.6** |
| | **Ջրառաջարկը** | **850.0** | **800.0** | **800.0** | **800.0** |
| | **Դեֆիցիտը/պրոֆիցիտը** | **-135.1** | **-10.4** | **-10.4** | **-8.6** |

16. Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսներից՝

- խմելու-կենցաղային նպատակով ջրառի կանխատեսման համար հիմք են հանդիսանումբնակչության աճի և համայնքների կողմից խմելու-կենցաղային նպատակով օգտագործվող հորատանցքերից ջրառի օրինականացման միտումները: 2017 թվականի դրությամբ ջրառը կազմում է78.4 մլն մ³/տարի և կանխատեսվում է, որ մինչև 2021 թվականը ջրառը կաճի շուրջ100%-ով և կկազմի շուրջ 170.3մլն մ³/տարի:
- ոռոգման նպատակով 2017 թվականի դրությամբ ջրառը կազմում է 221.3մլն մ³/տարի և կանխատեսվում է, որ մինչև 2021 թվականը ջրառի ծավալը կաճի շուրջ 6%-ով հասնելով 235.2մլնմ³/տարի: Տոկոսային ցածր աճի կանխատեսումը պայմանավորված է Վեդու ջրամբարի կառուցմամբ, ջրակորուստների նվազեցմամբ և ջրախնայող համակարգերի ներդրմամբ:
- ձկնաբուծության նպատակով 2017 թվականի դրությամբ ջրառը կազմում է 662,0 մլն մ³/տարի և կանխատեսվում է, որ մինչև մինչև 2021 թվականը ջրառը կնվազի շուրջ46%-ով և կկազմի շուրջ357,0մլնմ³/տարի: Ձկնաբուծության նպատակով ջրօգտագործման նվազումը կապված է,ինչպես Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային ռեսուրսների մակարդակների նվազման, ջրային ռեսուրսի դեֆիցիտի առաջացման, այնպես էլ ջրախնայող նոր տեխնոլոգիաների ներդրման հետ:Նման նվազումը նաև պայմանավորված է նրանով, որ «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» ՀՀ օրենքով,ձկնաբուծական նպատակով ջրօգտագործումը, համեմատ խմելու-կենցաղային, ոռոգման, արդյունաբերական նպատակներովջրօգտագործման,կրում է երկրորդային բնույթ:
- արդյունաբերական նպատակով 2017 թվականի դրությամբ ջրառը կազմում է 23,4 մլն մ³/տարի և կանխատեսվում է, որ մինչև 2021

թվականը ջրառը կաճի շուրջ60%-ով և կկազմի շուրջ37.5մլն $մ^3$/տարի: Արդյունաբերական նպատակով ջրառի աճը պայմանավորված է տնտեսության և ներդրումների աճի հետ:

17. Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի 1-ի և 2-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 18-ի N1111-Ն որոշման պահանջների, կասեցվում են Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսներից ձկնաբուծական նպատակով տրված ջրօգտագործման թույլտվությունները, և վերաձևակերպվում են՝ըստ փուլայնության և օգտագործվող ջրաքանակի՝

- 1-ին փուլ՝ 150լ/վրկ-ից ավելի ջրառ իրականացնող ձկնաբուծարաններում, ջրաքանակը նվազեցվում է շուրջ 45%-ով: Կատարման ժամկետը՝ 2017 թվականի օգոստոսի 3-րդ տասնօրյակ,
- 2-րդ փուլ՝ 100լ/վրկ-ից ավելի և մինչև 150լ/վրկ ջրառ իրականացնող ձկնաբուծարաններում, ջրաքանակը նվազեցվում է շուրջ 30%-ով: Կատարման ժամկետը՝ 2017 թվականի դեկտեմբերի 3-րդ տասնօրյակ,
- 3-րդ փուլ՝ մինչև 100լ/վրկ ջրառ իրականացնող ձկնաբուծարաններում, ջրաքանակը նվազեցվում է շուրջ 20%-ով: Կատարման ժամկետը՝ 2018 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ:

18. Այն ջրօգտագործման թույլտվությունները, որոնք գործողության ժամկետում են, սակայն ձկնաբուծական տնտեսությունը գործունեություն չի ծավալում, համարվում են կասեցված և ենթակա չեն երկարաձգման կամ վերաձևակերպման:
19. Հիմք ընդունելով սույն հավելվածին կից N2-ից N4 աղյուսակներում ներառված 2017 թվականների համար ստորերկրյա ջրային ռեսուրսների դեֆիցիտը և մինչև 2021 թվականը ջրապահանջարկի և ջրառաջարկի կանխատեսումները, Արարատյան դաշտում արգելվում է՝

- նոր հորատանցքերի հորատումը,
- ստորերկրյա ջրային ռեսուրսներից ձկնաբուծության նպատակով նոր ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը:

Հավելված N2

ՀՀ կառավարության 2017 թվականի

«» «»-ի N որոշման

**Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումներ**

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Կատարողը<br><br>Համակատարողը | Կատարման ժամկետը | Ֆ<br>ա |
|---|---|---|---|---|
| 1. | Արարատյան դաշտում ստորերկրյա ջրային ռեսուրսներից ձկնաբուծության նպատակով տրված ջրօգտագործման թույլտվությունների վերանայում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2018 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆ<br>ա |
| 2. | Ձկնաբուծության նպատակով տրված ջրօգտագործման թույլտվությունների անբաժանելի մաս հանդիսացող պայմաններում փաստացի ջրօգտագործման ավտոմատ, կենտրոնացված, առցանց վերահսկման համակարգի ներդրման պայմանի ներառում՝ այդ թվում | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2018 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆ<br>ա |
| 2.1 | 150 լ/վրկ-ից ավելի ջրօգտագործման ծավալներ ունեցող ձկնայինտնտեսությունների համար | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2017թ.օգոստոսի<br><br>3-րդ տասնօրյակ | Ֆ<br>ա |
| 2.2 | 100-150 լ/վր ջրօգտագործման ծավալներ ունեցող ձկնային տնտեսությունների համար | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2017թ.<br>դեկտեմբերի<br><br>3-րդ տասնօրյակ | Ֆ<br>ա |
| 2.3 | 50-100 լ/վրկ ջրօգտագործման ծավալներ ունեցող ձկնային տնտեսությունների համար | ՀՀ բնապահպանության նախարարություն | 2018 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ | Ֆ<br>ա |